

2. Սալթի հայ գաղութը եւ անոր եկեղեցին.

Պատմութենէ գիտենք թէ Յորդանանի անդիլի կողմը զանազան տեղեր՝ մանաւանդ Սաչակրաց ժամանակ, հայ գաղութներ հաստատուած էին. մանաւորապէս սոյն աշխատասիրութեանս մէջ (էջ 47-58) գրեցինք Քէրէկի հայ գաղութին ու անոր եկեղեցիին պատմութեան մասին մէջ բերելով կարևոր յիշատակարաններ: Հ. Ալիշան իր Սիսուանին մէջ (էջ 482) Քերէկի հետ կը յիշէ Շոքակ (Schaubak), Մոնրեալ բերդաքաղաքները եւ կը յարէ թէ այդ անունով կը կոչուէին եօթը բերդերը Քէրէկի տէրութեան որ սահմանորդ էր Եգիպտոսի, Արաբիոյ Անապատին եւ Օսովու. եւ յետոյ կ'աւելցնէ «Այլ զանց արարեալ զայրով փոքրագոյն սահմանօք, սևեռոսաց կացքե եւ մնայ իսկ» խօսքը: Այս տողերէն մենք կը հասկնանք թէ Քէրէկի տէրութեան, ինչպէս իր կեդրոնին՝ Քէրէկի, նոյնպէս Շոքակի եւ Մոնրէալ բերդաքաղաքներուն մէջ կային հայ գաղութներ, որոնց վրայ ծանօթութիւններ կը պահպին: Նոյն տէրութեան սահմանին մէջ էր նաև Սալթը՝ Յորդանանին անդիլի կողմը, ճիշդ Երիքովի դիմացը, ըստ Ապուլ-Ֆէտայի, Սալթը երկու օրուան ճանապարհ հեռի էր Քէրէկէն:

Կլխաւորաբար աւանդութենէ կ'իմանանք թէ Սալթի մէջ կար հայ գաղութ մը, որ նմանապէս պատմութիւնն չունի. տեղւոյն վրայ մինչև այսօր ցոյց կը տրուի փոքրիկ եկեղեցի մը Ս. Գեորգ անունով, որուն համար կ'ըսուի թէ կանուխէն Հայոց կը վերաբերէր, բայց յետոյ հայ գաղութին ցրուումին կամ ցուման հետեւանքով Յոյները գրաւած են, և կը կարծուի թէ այս առթիւ ջնջուած են նոյն եկեղեցիին հայեցի յիշատակարանները: Թ. Միհրդատեանց իր մէկ գիրքին մէջ (Տես Նկարագիր Աղեօից Երուսաղէմի, էջ 59) կը գրէ թէ «Յոյնք յափշտակած եւ յունագաւան ըրած են Գազայի մեր ժողովուրդը՝ Գերեկի, Երիքովի և Սալթի ժողովուրդներուս նման...»: տարակոյս չկայ որ ժամանակի խառնաշփոթութենէն և Հայոց տկարութենէն օգտուելով գրացի բրիտոնեայք՝ շատ անգամ առ նախանձու զանազան նեղութիւններով ստիպած են Հայերը յարելու ուրիշ եկեղեցիներու և ի վերջոյ ձուլուելու օտար աղգութիւններու մէջ. այս-